

## Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

«Երևանի պետական համալսարան» հիմնադրամի  
հոգաբարձուների խորհրդի՝  
2020 թ. հոկտեմբերի 30-ին տեղի ունեցած թիվ 2 նիստի  
(հարցման կարգով)

ք. Երևան

30.10.2020 թ.

Հարցման կարգով նիստին մասնակցել են «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի (այսուհետ՝ Խորհուրդ) 32 անդամներից 29-ը:

### **Օրակարգը՝**

1. «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Արևելագիտության ֆակուլտետում «Մերձավորարևելյան հետազոտությունների կենտրոն» կառուցվածքային ստորաբաժանման ստեղծում:

**1. «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Արևելագիտության ֆակուլտետում «Մերձավորարևելյան հետազոտությունների կենտրոն» կառուցվածքային ստորաբաժանման ստեղծում:** Խորհրդի քարտուղար Մ. Մալխասյանի կողմից 23.10.2020 թ. Խորհրդի 32 անդամներին ծանուցվել է, որ «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի գիտական խորհուրդը, առաջնորդվելով իր կանոնակարգի 4-րդ կետի 2-րդ ենթակետով, 22.10.2020 թ. № 2/2 որոշմամբ առաջարկում է «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Արևելագիտության ֆակուլտետում ստեղծել «Մերձավորարևելյան հետազոտությունների կենտրոն» կառուցվածքային ստորաբաժանումը:

Անվանական քվեաթերթիկների միջոցով կատարված հարցման արդյունքները հետևյալն են. կողմ՝ 29, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0:

### **Որոշվեց.**

Ղեկավարվելով «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի կանոնադրության 42-րդ կետի 5-րդ և 49-րդ կետի 2-րդ ենթակետերով, ինչպես նաև «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի աշխատակարգի 2.4

կետի 5-րդ ենթակետով, հիմք ընդունելով «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի գիտական խորհրդի 22.10.2020 թ. № 2/2 որոշումը՝

1. «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Արևելագիտության ֆակուլտետում ստեղծել «Մերձավորարևելյան հետազոտությունների կենտրոն» կառուցվածքային ստորաբաժանումը:

**Խորհրդի նախագահ՝**

**Գ. Մուրադյան**

**Քարտուղար՝**

**Մ. Մալխասյան**